## Գաղտնիության քաղաքականություն

Pro Media.-ն հանդիսանում է հայկական մեդիա բովանդակության առցանց հոսքային ծառայություն, որը ներառում է ֆիլմեր, սերիալներ, մուլտֆիլմեր և այլ բովանդակություն arikino.am կայքի միջոցով: Այս Գաղտնիության քաղաքականությունը բացատրում է, թե ինչպես ենք մենք հավաքում, օգտագործում և բացահայտում arikino.am ծառայությունների միջոցով հավաքված տեղեկատվությունն ու տվյալները: Եթե Դուք ունեք որևէ հարց կամ մտահոգություն այս Գաղտնիության քաղաքականության վերաբերյալ, կարող եք կապ հաստատել մեզ հետ support@arikino.am հասցեով կամ այս Քաղաքականության վերջում նշված կոնտակտային տվյալներով:

ԾԱՆՈՒՑՈՒՄ. Եթե այլ կերպ սահմանված չէ այս Գաղտնիության քաղաքականության մեջ, բոլոր մեծատառով գրված տերմինները նույն իմաստն ունեն, ինչ մեր Օգտվելու կանոններում:

1. Ի՞նչ տեսակի տեղեկատվություն ենք հավաքում Ձեր և Ձեր գործողությունների մասին:

Երբ Դուք ստեղծում եք Հաշիվ հավելվածում, մենք հավաքում ենք որոշակի անձը նույնականացնող տեղեկատվություն Ձեր մասին, ինչպիսիք են Ձեր անունը, էլ.փոստի հասցեն, տարիքը և ծննդյան ամսաթիվը («ԱՆՏ»): Այստեղ ներկայացված է այն տեղեկատվության ցանկը, որը մենք կարող ենք հավաքել Ձեր և Arikino.am Ծառայություններն օգտագործելու ընթացքում Ձեր գործողությունների մասին:

Տեղեկատվություն Ձեր մասին՝ ներառյալ Ձեր անունը, էլ.փոստի հասցեն և ծննդյան ամսաթիվը, որը Դուք տրամադրում եք մեզ,

Տեղեկատվություն, որը մենք ավտոմատ կերպով հավաքում ենք, երբ Դուք սկսում եք օգտագործել arikino.am ծառայությունները, ներառյալ Ձեր գտնվելու վայրը, Ձեր IP հոսթ հասցեն, ինչ տեսակի բջջային սարք եք օգտագործում և այլ սարքի նույնացուցիչներ, Ձեր օպերացիոն համակարգը, Ձեր մոտավոր գեոլոկացիան՝ հիմնված Ձեր IP հասցեի վրա, Ձեր գործողությունները arikino.am ծառայություններում, մուտքագրման տվյալները և տեղեկատվություն, որը հավաքվում է cookie-ների, վեբ փարոսների կամ այլ տեխնոլոգիաների միջոցով:

Այլ առևտրային հասանելի տեղեկատվություն՝ ներառյալ հանրային տվյալների բազաներից, տվյալների ագրեգատորներից կամ երրորդ կողմերից, որոնք ներառում են Ձեր հոբբիները, հետաքրքրությունները, գնման վարքագիծը և

այլ առցանց գործողություններ, ինչպիսիք են այն կայքերը, որոնք Դուք այցելել եք կամ ցանկացած գովազդ, որը Դուք դիտել եք:

2. Ինչպե՞ս ենք օգտագործում Ձեր մասին հավաքված տեղեկատվությունը:

Հարմարեցում, Բարելավում, Կիրարկում. մեր առաքելությունը Ձեզ տրամադրել հնարավորինս լավագույն փորձառություն arikino.am ծառայություններն օգտագործելիս, որի համար մենք օգտագործում ենք Ձեր մասին հավաքված տեղեկատվությունը: Ահա այն ընդհանուր նպատակները, որոնց համար մենք օգտագործում ենք Ձեր տեղեկատվությունը՝

կապ հաստատել Ձեզ հետ,

Մենք նաև իրավունք ենք վերապահում համադրել Ձեր և Ձեր գործողությունների մասին հավաքված ցանկացած կամ բոլոր տեղեկատվությունը: Մենք կարող ենք ստեղծել ընդհանրական, ոչ-նույնականացնող տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են օգտագործվում Arikino.am ծառայությունները՝ վիճակագրական նպատակներով:

Արդյունավետորեն ապահովել Ձեզ համար մեր ծառայությունները,

պարզել, թե ինչ բովանդակությամբ եք կիսվում, երբ օգտագործում եք Arikino.am ծառայությունները և դիտում բովանդակությունը,

բարելավել Arikino.am ծառայությունները և փորձառությունը,

իրականացնել հետազոտություններ,

կուտակել տվյալներ ներքին և/կամ արտաքին բիզնես նպատակների համար,

կանխել հնարավոր անօրինական գործողություններ,

պաշտպանել մեր իրավունքները,

օգտագործել այլ եղանակներով, որոնք սահմանված են մեր Օգտվելու կանոններում,

բարելավել Ձեր փորձառությունը այն տեղեկատվությամբ, որը բացահայտվել է Ձեզ այն պահին, երբ մենք հավաքել ենք Ձեր տեղեկատվությունը:

Գովազդային Հաղորդակցություններ

Դուք հասկանում եք, որ մենք կարող ենք ժամանակ առ ժամանակ Ձեզ ուղարկել տեղեկագրեր, էլ.փոստեր կամ այլ տեսակի հաղորդակցություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն գովազդում են Arikino.am ծառայությունները: Նման էլ.փոստերը կարող են ներառել գովազդային տեղեկատվություն մեր հնարավորությունների մասին, կամ ցանկացած այլ առաջարկներ, որոնք, մեր կարծիքով, կարող են հետաքրքրել Ձեզ, ինչպես նաև այլ առաջարկներ՝ կապված

Arikino.am ծառայությունների և մեր բիզնես գործընկերների հետ։ Դուք կարող եք ցանկացած պահի հրաժարվել («opt-out») մեզնից նման հաղորդակցություններ ստանալուց՝ սեղմելով «չեղարկել բաժանորդագրությունը» («unsubscribe»), որը կարող եք գտնել նման հաղորդակցությունների ներքևի հատվածում։ Գոյություն ունեն որոշ հաղորդակցություններ գործարքների վերաբերյալ, որոնցից հրաժարվելու («opt-out») հնարավորություն չեք ունենա, ներառյալ, բայց չսահմանափակվելով, մեր Օգտվելու կանոնների կամ Գաղտնիության քաղաքականության թարմացումների վերաբերյալ հաղորդակցություններով։ Նման հաղորդակցությունները հիմնականում կրելու են տեղեկատվական բնույթ։

3. Վեբ վերլուծության ծառայություն տրամադրողներ

Arikino.am-ն օգտագործում է Google Analytics, որը տրամադրվում է Google, Inc.-ի կողմից, հավաքելու տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են մեր օգտատերերը փոխազդում Arikino.am Ծառայությունների հետ։ Այցելեք https://policies.google.com/technologies/partner-sites ավելի շատ տեղեկատվություն ստանալու Google Analytics-ի մասին։ Եթե ցանկանում եք հրաժարվել Google-ի կողմից Ձեր՝ Կինոդարան Ծառայություններն օգտագործելուց առաջացած տվյալների հավաքումից և մշակումից, խնդրում ենք այցելել https://tools.google.com/dlpage/gaoptout։

Բիզնես գործարքների վերաբերյալ

Ամբողջ տեղեկատվությունը, ներառյալ ԱՆՏ-ը, որը մենք հավաքում ենք մեր օգտատերերի մասին և նրանցից, համարվում է բիզնես ակտիվ։ Մեր բիզնես ակտիվներից որոշները կամ բոլորը ենթակա են բացահայտման կամ փոխանցման երրորդ կողմին վերակազմակերպման դեպքում, ինչպիսիք են միաձուլումը, ձեռքբերումը, ակտիվների վաճառքը և այլն։

Ձեր տեղեկատվության օգտագործումը Ձեզ գովազդային նյութեր ուղարկելու համար

Դուք կարող եք ցանկացած պահի հրաժարվել («opt-out») մեզնից գովազդային հաղորդակցություններ ստանալուց՝ սեղմելով «չեղարկել բաժանորդագրությունը» («unsubscribe»), որը կարող եք գտնել նման հաղորդակցությունների ներքևի հատվածում։ Դուք չեք կարողանա հրաժարվել որոշակի գործարքային էլ.փոստեր և Arikino.am Ծառայությունների թարմացումներ ստանալուց, ներառյալ, բայց չսահմանափակվելով, մեր Օգտվելու կանոնների կամ Գաղտնիության քաղաքականության թարմացումների վերաբերյալ հաղորդակցություններով։ Նման

հաղորդակցությունները հիմնականում կրելու են տեղեկատվական բնույթ։

Ձեր մասին այլ կայքերից հավաքված տեղեկատվության օգտագործումը

Arikino.am-ն իրավունք է վերապահում պահպանել տեղեկատվություն այն մասին, թե ինչ կայքեր եք այցելում՝ Ձեր սարքի դիտարկիչի cookie-ներում։

Ձեր Arikino հաշվի դադարեցումը

Դուք կարող եք կապ հաստատել մեզ հետ՝ ուղարկելով էլ.փոստ support@arikino.am հասցեին և խնդրել դադարեցնել Ձեր հաշիվը՝ համաձայն մեր Օգտվելու կանոնների։ Նաև նկատի ունեցեք, որ Ձեր հաշվի դադարեցումից հետո Ձեր մասին որոշ տեղեկատվություն կարող է պահպանվել մեր կողմից, ինչպես պահանջվում և/կամ թույլատրվում է կիրառելի օրենսդրությամբ։

4. Ջնջել

Դուք կարող եք մեզ ուղարկել հարցում՝ ջնջելու Ձեր մասին անձնական տեղեկատվությունը, որը մենք հավաքել ենք Ձեզնից՝ ուղարկելով էլ.փոստով հարցում support@arikino.am հասցեին։

5. Ի՞նչ է տեղի ունենում, երբ Arikino.am-ը փոփոխություններ է կատարում այս Գաղտնիության քաղաքականության մեջ։

Եթե որևէ պահի որևէ էական փոփոխություններ են կատարվեն այս Գաղտնիության քաղաքականության մեջ, Դուք կտեղեկացվեք այդ փոփոխությունների մասին էլ.փոստի կամ այլ ծանուցումների միջոցով։ Մենք նաև կթարմացնենք վերևում նշված «Ուժի մեջ է սկսած» ամսաթիվը՝ նշելու համար, թե երբ են այդպիսի փոփոխություններն ուժի մեջ մտնում։

Կոնտակտներ

Եթե Դուք ունեք որևէ հարց այն եղանակի վերաբերյալ, որով մենք հավաքում և օգտագործում ենք Ձեր անձնական տեղեկատվությունը, կարող եք կապ հաստատել մեզ հետ էլփոստի միջոցով այստեղ՝ support@arikino.am